

Հանրապետական առարկայական օլիմպիադա
Հայ գրականություն
IX դասարան

(տևողությունը՝ 180 րոպե)

Միբեյի՛ մասնակից, անկաշառ սիրով ու վստահությամբ մտի՛ր գրականության կախարդական աշխարհ ու դարձի՛ր այդ աշխարհի լիիրավ տերը:
Հաղթանակ և բերկրանք եմ մաղթում քեզ:

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան

1.Ի՞նչ է Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի «Հառաջաբանը» հայ գրականության համար: Ի՞նչ խնդիրներ է առաջ քաշում Աբովյանը «Հառաջաբանում»: Ո՞վ է ասույթի հեղինակը.«Այդ աշխատության մեջ մարմին է առել.....»: Շարունակի՛ր: 5 մ.

2.Ո՞ր հեղինակի ո՞ր բանաստեղծությունն է դարձել ՀՀ օրհներգ: Ո՞ր պատմիչն է հիշատակվում այդ բանաստեղծության մեջ: Գրի՛ր այդ քառատողը: Ի՞նչ ասույթներ կարող ես հիշել այդ պատմիչի դասերից(գրի՛ր երկու ասույթ): 5 մ.

3.Ո՞ր դարերում են ստեղծվել հայրենները. ի՞նչ է նշանակում հայրեն, ի՞նչ կառուցվածք ունեն հայրենները:Ովքե՞ր են ստեղծագործել հայրենի կարգով: Գրի՛ր երկու հայրեն և մեկնաբանի՛ր դրանցից մեկը: 5 մ.

4.Ե՞րբ և որտե՞ղ է ստեղծագործել Սայաթ- Նովան: Ինչպիսի՞ վախճան է ունեցել նա. որտե՞ղ է ամփոփված նրա աճյունը, ի՞նչ տոնակատարություն է նշվում այնտեղ, ովքե՞ր են կանգնած այդ տոնակատարության ակունքներում: Շարունակի՛ր և վերլուծի՛ր՝

Աշխարումբս ախ չիմ քաշի, քանի վուր ջա՛ն իս ինձ ամա.

Անմահական ջրբով լիքը օսկե փռնջան իս ինձ ամա.

Նըստիմ, վրբես շըվաք անիս՝ զարբաբ վրբան իս ինձ ամա.

Սուչս իմացի է՛նենց սպանե՛ սուլթան ու իսան իս ինձ ամա:

5 մ.

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան